Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն №1

«Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝ 2019 թ. փետրվարի 27-ին՝ ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի

ք. Երևան

Նիստին ներկա էին «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի (այսուհետ՝ ՀԳՊԱ) հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 24 անդամներից 20-ը՝ Ա.Անափիոսյանը, Վ.Բուդումյանը, Ս.Սիմոնյանը, Է.Մարգարյանը, Լ.Գրիգորյանը, Ս.Սաֆարյանը, Գ.Նազարյանը, Մ.Այվազյանը, Գ.Մուրադյանը, Ռ.Մալայանը, Մ.Այվազյանը Է.Վարդանյանը, Ա.Գրիգորյանը, Փ.Միրզոյանը, Ա.Ավետիսյանը, Ա.Ալավերդյանը, Ս.Պողոսյանը, Յու.Ներսիսյանը, Մ.Մուսաելյանը և Ա.Աղաջանյանը:

Օրակարգային առաջին և երկրորդ հարցերի ժամանակ նիստը նախագահում էր Խորհրդի տարիքով ավագ անդամը՝ ՀԳՊԱ արվեստագիտության և հումանիտար գիտությունների ամբիոնի պրոֆեսոր Աշոտ Գրիգորյանը: Օրակարգային երկրորդ հարցի քննարկումից հետո նիստը նախագահում էր Խորհրդի նորընտիր նախագահ, Հայաստանի նկարիչների միության նախագահ Սուրեն Սաֆարյանը:

Բացելով Խորհրդի անդրանիկ նիստը, Ա.Գրիգորյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քննարկման դրեց նիստի օրակարգը.

1. Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի քննարկում և հաստատում:
2. Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրություն:
3. Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի հոգաբարձուների խորհրդի քարտուղարի ընտրություն:
4. «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի 2018 թվականի գործունեության ՀԳՊԱ ռեկտորի հաշվետվության լսում և գնահատում:
5. «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի վարչական կառուցվածքի քննարկում և հաստատում:
6. 2019 ֆինանսական տարվա ՀԳՊԱ եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատում:

7. ՀԳՊԱ ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձի ընտրություն:
8. «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի Գյումրու մասնաճյուղի կանոնադրության քննարկում և հաստատում:
9. «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի սեփականությունը հանդիսացող լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրման, լուծարման և օտարման կարգի քննարկում և հաստատում:

Օրակարգի առնչությամբ ելույթ ունեցավ ՀՀ ԿԳ նախարարի տեղակալ Ա.Անափիոսյանը՝ առաջարկելով օրակարգի 1-ին, 5-րդ, 8-րդ և 9-րդ կետերով հաստատման ներկայացվող փաստաթղթերի քննարկումը և հաստատումը կազմակերպել էլեկտրոնային եղանակով, ինչը լրացուցիչ հնարավորություն կտա վերոնշյալ փաստաթղթերում ներառել Հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամների կարծիքները: Ա.Անափիոսյանը առաջարկեց՝ մինչ Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի նախագծի հաստատումը առաջնորդվել 2017 թվականի հոկտեմբերի 27-ին ՀԳՊԱ հոգաբարձուների խորհրդի նիստում հաստատված աշխատակարգի դրույթներով: Հնչած տեսակետը պաշտպանեց նաև ՀՀ ԿԳՆ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետի տեղակալ Լ.Գրիգորյանը՝ նշելով, որ փոփոխության պետք է ենթարկվի Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի նախագծի 9.1 կետը: Համաձայն Աշխատակարգի նախագծի 9.1 կետի նիստի արձանագրությունը պետք է ստորագրեն Խորհրդի նախագահը և քարտողարը, այնինչ «ՀՀ հիմնադրամների մասին օրենք»-ի համաձայն արձանագրությունը պետք է ստորագրեն խորհրդի նիստին մասնակցած բոլոր անդամները: Ելույթ ունեցավ նաև ՀՀ վարչապետի աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության պետի տեղակալ Ս.Սիմոնյանը: Ս.Սիմոնյանը նշեց, որ «ՀՀ հիմնադրամների մասին օրենք»-ի համաձայն ՀԳՊԱ-ն պետք է ունենա «Գույքի օգտագործման կարգ», իսկ օրակարգի 9-րդ կետով քննարկման և հաստատման ներկայացված ««Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի սեփականությունը հանդիսացող լրիվ մաշված գույքի դուրսգրման, լուծարման և օտարման կարգ»-ի դրույթները պետք է «Գույքի օգտագործման կարգ»-ի մասը հանդիսանան: Ս.Սիմոնյանը առաջարկեց օրակարգի 9-րդ կետով հաստատման ներկայացված կարգի փոխարեն էլեկտրոնային եղանակով քննարկման և հաստատման ներկայացվի «ՀԳՊԱ գույքի օգտագործման կարգ»-ը:

Ա. Գրիգորյանը քննարկման դրեց նիստի նոր օրակարգը.

1. Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրություն:
2. Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի հոգաբարձուների խորհրդի քարտուղարի ընտրություն:
3. «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի 2018 թվականի գործունեության ՀԳՊԱ ռեկտորի հաշվետվության լսում և գնահատում:
4. 2019 ֆինանսական տարվա ՀԳՊԱ եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատում:
5. ՀԳՊԱ ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձի ընտրություն:

Խորհրդի անդամների կողմից օրակարգային այլ հարցեր չառաջարկվեց, և օրակարգը դրվեց քվեարկության. կողմ՝ 20, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց. Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգ, «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի վարչական կառուցվածք, «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի Գյումրու մասնաճյուղի կանոնադրություն և «ՀԳՊԱ գույքի օգտագործման կարգ» փաստաթղթերի քննարկումը և հաստատումը կազմակերպել էլեկտրոնային եղանակով՝ էլ. փոստի միջոցով: Նշված փաստաթղթերը հոգաբարձուների խորհրդի անդամներին ուղարկել սույն նիստի ավարտից հետո ոչ ուշ քան 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ նշված ժամկետը հատկացնելով «ՀԳՊԱ գույքի օգտագործման կարգ»-ի մշակմանը:

1. «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրություն:

Ա.Գրիգորյանը խնդրեց առաջադրել «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմին հանդիսացող՝ հոգաբարձուների խորհրդի նախագահի թեկնածուներ: Խորհրդի անդամներից ելույթ ունեցավ ՀԳՊԱ Կերպարվեստի ֆակուլտետի գեղանկարի և գծանկարի ամբիոնի վարիչ Փ.Միրզոյանը, ով առաջարկեց Խորհրդի նախագահ ընտրել Հայաստանի նկարիչների միության նախագահ Ս. Սաֆարյանին:

Այլ առաջարկներ չեղան, և Ս.Սաֆարյանի թեկնածությունը դրվեց քվեարկության. կողմ՝ 20, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց. Ղեկավարվելով «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի կանոնադրության 32-րդ կետով և Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.3 կետով՝ ՀԳՊԱ հոգաբարձուների խորհրդի նախագահ ընտրել Հայաստանի նկարիչների միության նախագահ Ս.Սաֆարյանին:

2. «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղարի ընտրություն:

Խորհրդի նախագահ Ս.Սաֆարյանն առաջարկեց «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղար ընտրել ՀԳՊԱ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մ.Այվազյանին: Այլ թեկնածություններ չառաջադրվեցին, և Մ.Այվազյանի թեկնածությունը դրվեց քվեարկության. կողմ՝ 20, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց. Ղեկավարվելով «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.3 կետով՝ ՀԳՊԱ հոգաբարձուների խորհրդի քարտուղար ընտրել ՀԳՊԱ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մ.Այվազյանին:

3. «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի 2018 թվականի գործունեության ՀԳՊԱ ռեկտորի հաշվետվության լսում և գնահատում:

Օրակարգային երրորդ հարցը ներկայացնելու համար Խորհրդի նախագահ Ս. Սաֆարյանը խոսքը տրամադրեց ՀԳՊԱ ռեկտոր Ա. Իսաբեկյանին:

Իր զեկույցում Ա. Իսաբեկյանը ներկայացրեց 2018 թվականի ընթացքում ՀԳՊԱ ձեռքբերումները կառավարման համակարգի բարելավման, կրթական ծրագրերի զարգացման և ուսումնական գործընթացի իրականացման, հետազոտությունների և ուսումնական գործընթացի հետ դրանց փոխկապակցման, արտաքին կապերի զարգացման և դասախոսների ու ուսանողների շարժունության ակտիվացման, հանրությանը մատուցվող լրացուցիչ ծառայությունների և որակի ապահովման գործընթացների ոլորտներում:

Ա. Իսաբեկյանը նշեց, որ վերոնշյալ գործողությունները իրականացվել են ՀԳՊԱ 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի համապատասխան և ամբողջովին միտված են բուհի առաքելության իրականացմանը:

Ռեկտորը նշեց, որ կառավարման համակարգի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2018 թվականի ընթացքում ակտիվ գործողություններ են իրականացվել «ՀԳՊԱ կառավարման տեղեկատվական (էլեկտրոնային) համակարգի» ներդրման ուղղությամբ, որոնք դեռ շարունակվում են: Գործընթացի ավարտին «ՀԳՊԱ կառավարման տեղեկատվական (էլեկտրոնային) համակարգ»-ը տեղեկատվության հավաքագրման և կառավարման հուսալի միջոց է հանդիսանալու: Այս համակարգի շնորհիվ կատարվող վերլուծությունները կարող են հիմք հանդիսանալ ճիշտ ժամանակին հավաքագրված և արժանահավատ տվյալների հիման վրա որոշումներ կայացնելու համար:

Ա. Իսաբեկյանը անդրադարձավ նաև դրամաշնորհային ծրագրերի ուղղությամբ տարվող աշխատանքներին: Ռեկտորը նշեց, որ 2018 թվականի դրությամբ ՀԳՊԱ-ն իրականացնում էր Էրազմուս պլյուսի երկու ծրագրեր, ինչպես նաև հանդիսանում է դրանցից մեկի (ԻՆՔԼՈՒԺՆ) ղեկավարը:

Անդրադառնալով ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը՝ Ա. Իսաբեկյանը նշեց, որ զգալի աշխատանքներ են տարվել մասնագիտության կրթական ծրագրերի արդիականացման մեթոդաբանության բարելավման նպատակով նախկինում մշակված մի շարք կարգերի, ձեռնարկների և ուղեցույցների արդյունավետ ներդրման ուղղությամբ: Նշված փաստաթղթային հենքի կիրառմամբ ՀԳՊԱ-ում մեկնարկել են բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) վերանայման աշխատանքները, ինչը միտված է ՄԿԾ-ների և ՀՀ որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) ու արտաքին շահակիցների պահանջների համապատասխանության ապահովմանը:

Անդրադառնալով միջազգային կապերին, շարժունությանը և հասարակությանը մատուցվող ծառայություններին՝ ռեկտորը նշեց, որ շարունակվել է համագործակցությունն արտերկրի գիտակրթական կենտրոնների հետ, կնքվել են համագործակցության նոր պայմանագրեր: Իրականացվել են կրթական, գիտական, մշակութային համատեղ ծրագրեր, դասախոսների և սովորողների փոխայցելություններ: Կազմակերպվել են բազմաթիվ ցուցահանդեսներ, սեմինարներ, քննարկումներ և այլ միջոցառումներ:

Ներկայացնելով որակի ապահովման գործընթացները՝ Ա. Իսաբեկյանն առավել կարևորեց ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի բարեհաջող ավարտը: 2018 թվականին ՀԳՊԱ-ն 4 տարվա ինստիտուցիոնալ հավատարմագրում

ստացավ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն»-ի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից:

Իր ելույթում Ա.Իսաբեկյանը անդրադարձավ նաև մի շարք այլ հարցերի, որոնք մանրամասն ներկայացված են ՀԳՊԱ ռեկնորի տարեկան զեկույցում:

Խորհրդի նախագահ Ս.Սաֆարյանը առաջարկեց հարցեր ուղղել ՀԳՊԱ ռեկտորին: Առաջինը ելույթ ունեցավ Ա.Անափիոսյանը հարցնելով՝ ինչու 2018 թվականի ընթացքում չեն հաստատվել բարեվարքության և բողոքների քննման հանձնաժողովի ստեղծումը կանոնակարգող փաստաթղթերը և ինչ է արվում բուհի գործունեության թափանցիկությունը մեծացնելու համար: Պատասխանելով հարցերին Ա.Իսաբեկյանը նշեց, որ առաջին հարցի ուղղությամբ մշակվել են՝ «ՀԳՊԱ-ի վարչական կազմի էթիկայի սկզբունքներ», «ՀԳՊԱ պրոֆեսորադասախոսական կազմի էթիկայի կանոնագիրք», «ՀԳՊԱ ուսանողների էթիկայի կանոնագիրք», «Էթիկայի և բողոքների քննման հարցերով հանձնաժողովի կանոններ» և «ՀԳՊԱ շահերի բախման քաղաքականություն» փաստաթղթերի նախագծերը, որոնք քննարկումների վերջին փուլում են և հաստատման կներկայացվեն գիտական խորհրդի առաջիկա նիստում: Ռեկտորը հայտնեց, որ բուհի գործունեության թափանցիկության մեծացման համար ամբողջովին նորացվել է ՀԳՊԱ-ի պաշտոնական կայքէջը, որն առանձնանում է յուրահատուկ ոճով, հարմարավետությամբ և բազմաբնույթ տեղեկատվության առկայությամբ: Կայքէջում զետեղված են բուհի գործունեությունը համակարգող բոլոր ներքին իրավական ակտերը, ինչպես նաև լուսաբանվում են ՀԳՊԱ-ում տեղի ունեցող բոլոր միջոցառումները: Հաջորդ հարցը ռեկտորին ուղղեց ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ Վ.Բուդումյանը: Նա հետաքրքրվեց, թե ինչով է պայմանավորված, որ բուհի բյուջեի հիմնական մասը ձևավորվում է ՀՀ պետական բյուջեի մուտքերից: Ա.Իսաբեկյանը պատասխանում նշեց, որ ՀԳՊԱ-ն իր ստեղծման օրվանից ՊՈԱԿ-ի կարգավիճակ է ունեցել և միայն վերջերս է դարձել հիմնադրամի, իսկ ինչպես հայտնի է՝ ՊՈԱԿ-ներին չի թույլատրվում ձեռնարկատիրական լայն գործունեություն ծավալել: Տվյալ պահին բուհը հնարավոր եկամուտների աղբյուրներ է փնտրում, սակայն միայն գաղափարների առկայությունը դեռ բավարար չէ և այդ պատճառով ՀԳՊԱ-ի վարչական կառուցվածքի նոր նախագծում ներառված է «ստեղծագործական և նախագծային պրոդուկտների առևտրայնացման պատասխանատու»-ի պաշտոնը: Հաջորդ հարցով նորից հանդես եկավ Ա.Անափիոսյանը: Նա հետաքրքրվեց, թե ինչ է արվում օտարերկրյա ուսանողներ ներգրավելու ուղղությամբ, կազմակերպվում են արդյոք դասընթացներ անգլերեն լեզվով և նախատեսված է արդյոք ծրագրային հավատարմագրում անցնել: Պատասխանելով հարցերին ռեկտորը նշեց, որ տվյալ

պահին բուհում խնդիր կա դասախոսների շրջանում անգլերենի իմացության հետ: Ներկայումս օտարերկրյա ուսանողների ուսումնառությունը ՀԳՊԱ-ում ապահովելու նպատակով օտարերկրացիների համար կազմակերպվում են հայերենի և ռուսերենի անվճար դասընթացներ, միևնույն ժամանակ նշվեց, որ բուհը քայլեր կձեռնարկի դասախոսների շրջանում անգլերենի իմացության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Ծրագրային հավատարմագրման վերաբերյալ Ա.Իսաբեկյանը նշեց, որ ՀԳՊԱ-ի 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի համաձայն նախատեսված է իրականացնել առնվազն մեկ կրթական ծրագրի ծրագրային հավատարմագրում:

Խորհրդի նախագահ Ս.Սաֆարյանը առաջարկեց հաստատել ռեկտորի հաշվետվությունը և ՀԳՊԱ 2018 թվականի գործունեությունը գնահատել բավարար:

Հարցը դրվեց քվեարկության. կողմ՝ 20, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց. Ղեկավարվելով «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի կանոնադրության 40-րդ կետի 3-րդ ենթակետով և ՀԳՊԱ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 3-րդ ենթակետով, լսելով 2018 թվականի ՀԳՊԱ գործունեության վերաբերյալ ռեկտոր Ա. Իսաբեկյանի հաշվետվությունը՝

1) Հավանություն տալ 2018 թվականի ընթացքում « Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը:

2) «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի 2018 թվականի գործունեությունը գնահատել բավարար:

4. 2019 ֆինանսական տարվա ՀԳՊԱ եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատում:

Ա. Իսաբեկյանը, ներկայացնելով 2019 թվականի ՀԳՊԱ եկամուտների և ծախսերի նախահաշիվը, շեշտեց, որ այն կազմում է 567.141.200 (հինգ հարյուր վացուն յոթ միլիոն մեկ հարյուր քառասուն մեկ հազար երկու հարյուր) դրամ: Պետական բյուջեից՝ 300.141.200 (երեք հարյուր միլիոն մեկ հարյուր քառասուն մեկ հազար երկու հարյուր) դրամ, ուսման վարձերի մուտքեր՝ 264.000.000 (երկու հարյուր վացուն չորս միլիոն) դրամ և այլ մուտքեր՝ 3.000.000 (երեք միլիոն) դրամ: Ուսանողների թվի ավելացում նախատեսված չէ: Ընթացիկ ծախսերի մակարդակը 2018 թվականի համեմատ գրեթե նույն չափով է նախատեսված:

Նախահաշիվը դրվեց քվեարկության. կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2:

Որոշվեց. Ղեկավարվելով «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի կանոնադրության 40-րդ կետի 6-րդ ենթակետով և ՀԳՊԱ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 6-րդ ենթակետով՝ հաստատել «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի 2019 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելվածի:

5. ՀԳՊԱ ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձի ընտրություն:

ՀԳՊԱ ռեկտոր Ա. Իսաբեկյանը ներկայացրեց, որ ՀԳՊԱ 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձի ընտրության համար կատարվել է շուկայի ուսումնասիրություն 3 ընկերությունների շրջանում՝ «Հայաուդիտ» ՍՊԸ, «ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ, «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ, որոնցից ամենացածր գինը (600.000 դրամ) առաջարկում է «Հայաուդիտ» ՍՊԸ-ն: Հիմք ընդունելով ընկերությունների կողմից ներկայացված պայմանները՝ առաջարկվեց աուդիտ իրականացնելու համար ընտրել առավել ցածր գին ներկայացնող ընկերությանը:

Առաջարկը դրվեց քվեարկության. կողմ՝ 20, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց. Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 13-րդ և 39-րդ հոդվածի 3-րդ կետերով, «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի կանոնադրության 40-րդ կետի 8-րդ ենթակետով և ՀԳՊԱ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 8-րդ ենթակետով՝ «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեության և ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնող անձ ընտրել «Հայաուդիտ» ՍՊԸ-ն:

Խորհրդի նախագահ՝ _____ Ս. Սաֆարյան

Խորհրդի քարտուղար՝ _____ Մ. Այվազյան